ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 22.02.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 13/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 02.02.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոք) և կից փաստաթղթերը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 07.02.2017թ. թիվ 40-249 գրությամբ ներկայացված դիրքորոշումը բողոքի վերաբերյալ և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (այսուհետ նաև՝ Կենտրոն) 20.02.2017թ. ներկայացված եզրակացությունը՝ պարզել է հետևյալը.

1. **«Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումներն և պահանջը.**

«Երվադա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 02.02.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բեռների տրանսպորտային առաքման ծառայության ձեռքբերման

նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ՇՀԾՁԲ-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 20.01.2017թ.:

Բողոքաբերը հայտնել է, որ 20.01.2017թ. Ընկերությունը ստացել է գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը, համաձայն որի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Երվադա» ՍՊԸ-ն:

20.01.2017թ.-ին «Երվադա» ՍՊԸ-ից պահանջվել է սահմանված ժամկետում ներկայացնել իր որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է պահանջված փաստաթղթերը, սակայն «Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշները հիմնավորող փաստաթղթերում պատվիրատուն արձանագրել է անհամապատասխանություններ:

26.01.2017թ. ժամը 16:00-ի սահմաններում Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով թիվ 3 արձանագրությունն ուղարկելով՝ տեղեկացրել է առկա անհամապատասխանությունների մասին, միաժամանակ առաջարկել է շտկել դրանք մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընկերությունն, շտկելով անհամապատասխանությունները, 27.01.2017թ.-ին Պատվիրատուին է ներկայացրել «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը, որը ընդունվել է Պատվիրատուի կողմից: Միաժամանակ Ընկերությունն հավաստել է, որ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը կներկայացվի նույն օրը, այնինչ Պատվիրատուն հայտարարել է, որ շտկման համար տրամադրված ժամկետը ավարտվել է 27.01.2017թ. ժամը 13:30-ին, կազմվել է թիվ 3.1 արձանագրությունն, որով «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը չներկայացնելու հիմքով:

Ընկերությունն, որպես բողոքի իրավական հիմք, վկայակոչելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 51-րդ կետի դրույթները, գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է 1 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները

հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու իրավունքը, քանի որ Պատվիրատուն 26.01.2017թ.-ին ծանուցել է անհամապատասխանությունների մասին, այնինչ 27.01.2017թ. ժամը 13:30-ին կազմվել է թիվ 3.1 արձանագրությունը, որով Ընկերության հայտը մերժվել է՝ իրեն տրամադրված 1 աշխատանքային օրվա ընթացքում «Տեխնիկական միջոցներ» չափանիշը հիմնավորող փաստաթղթերը չշտկելու հիմքով:

Ընկերությունը խնդրել է դադարեցնել գնահատող հանձնաժողովի թիվ 3.1 արձանագրությամբ ընդունված որոշումը՝ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ, կատարել հայտերի վերանայում՝ հնարավորություն տալով «Երվադա» ՍՊԸ-ին ներկայացնել «Տեխնիկական միջոցներ» չափանիշը հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը խնդրել է նաև կիրառել միջանկյալ միջոց և կասեցնել վերոնշյալ ծածկագրով Ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու գործընթացը, քանի որ ստեղծված պայմաններում պայմանագրի կնքումը զգալի վնասներ կհասցնի Ընկերության գործարար շահերին, ինչպես նաև պետության շահերին:

Որպես փաստական հանգամանքները հիմնավորող ապացույց՝ Ընկերությունն բողոքին կից ներկայացրել է գնահատող հանձնաժողովի արձանագրությունները (թիվ 2, թիվ 3, թիվ 3.1):

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոքի քննման շրջանակներում 08.02.2017թ. ժամը 16:05-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումներն և դիրքորոշումը.</u>

Կենտրոնը Պատվիրատուին ուղղված 03.02.2017թ. թիվ 01/04.1/338-17 գրությամբ խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն, վերոնշյալ գրությանը ի պատասխան, 07.02.2017թ. թիվ 40-249 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը, ստանալով շտկված փաստաթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ ծանուցումը, հաջորդ նիստի և ժամի առնչությամբ որևէ առարկություն կամ անհամաձայնություն Պատվիրատուին չի ներկայացրել:

«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, անձամբ ներկայանալով նիստին և գնահատող հանձնաժողովին տրամադրելով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով անհամապատասխանության շտկումը, ըստ էության, ընդունել է տվյալ նիստի համար Պատվիրատուի սահմանած ժամկետը և պարտավոր էր ներկայացնել նաև «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով առաջարկվող շտկումը, որը նրա կողմից չի կատարվել մինչև տվյալ օրվա ավարտը:

Պատվիրատուն նաև հայտնել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի բողոքում նշված այն պնդումը, թե թիվ 3.1 արձանագրությունը կազմվել է 27.01.2017թ. ժամը 13:30-ին, չի համապատասխանում իրականությանը, քանի որ գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում նշվում է նիստը սկսվելու, այլ ոչ թե արձանագրությունը կազմելու օրը և ժամը: Թիվ 3.1 արձանագրությունը կազմվել և մասնակիցներին էլեկտրոնային եղանակով տրամադրվել է հաջորդ աշխատանքային օրվա (30.01.2017թ.) ժամը 16:00-ին:

Կենտրոնում ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի 08.02.2017թ. ժամը 16:05-ին տեղի ունեցած նիստին հանձնաժողովի նախագահի այն հարցին՝ թե սկսված ծանուցման պահից ո՞ր ժամանակահատվածում Ընկերությունը պետք է ներկայացներ շտկված փաստաթղթերը, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց՝ մինչև 27.01.2017թ ժամը 16:30-ը, քանի որ իրենց աշխատանքային օրը ավարտվում է 16:30-ին: Նախագահողի կողմից հնչեցված հարցին՝ թե հաջորդ նիստի օր և ժամ սահմանելով 27.01.2017թ. ժամը 13:30-ը՝ արդյոք Պատվիրատուի կողմից չի սահմանափակվել Ընկերության իրավունքը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել շտկված փաստաթղթերը, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերությունը՝ հնարավորություն ունենալով ներկայացնել փաստաթղթերը, չի օգտվել այդ իրավունքից:

3. <u>ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

Կենտրոնը խորհրդին է ներկայացրել իր 20.02.2017թ. եզրակացությունն և առաջարկել է «Երվադա» ՍՊԸ-ի բողոքը բավարարել:

4. **<u>ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երվադա» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բեռների տրանսպորտային առաքման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ՇՀԾՁԲ-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով:

2. Համաձայն 20.01.2017թ. գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ ընդունված որոշման՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Երվադա» ՍՊԸ-ն:

3. 20.01.2017թ.-ին «Երվադա» ՍՊԸ-ից պահանջվել է սահմանված ժամկետում ներկայացնել իր որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. ***26.01.2017թ.-ին*** Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով թիվ 3 արձանագրությունն ուղարկելով՝ տեղեկացրել է առկա անհամապատասխանությունների մասին, միաժամանակ առաջարկել է շտկել դրանք՝ ***մեկ աշխատանքային օրվա ընթացքում:***

5. Համաձայն 27.01.2017թ. ***ժամը 13:30-ի*** թիվ 3.1 արձանագրությամբ ընդունված որոշման՝ Ընկերության հայտը մերժվել է՝ իրեն տրամադրված 1 աշխատանքային օրվա ընթացքում «Տեխնիկական միջոցներ» չափանիշը հիմնավորող շտկված փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

6. ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Երվադա» ՍՊԸ-ի 02.02.2017թ. բողոքով

ներկայացված միջնորդությունը 08.02.2017թ.-ին որոշեց բավարարել միջնորդությունը՝ Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու գործընթացը կասեցնել:

5. <u>ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումներն և եզրահանգումը.</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 02.02.2017թ. ներկայացված բողոքը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը, ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոքը քննելու նպատակով 08.02.2017թ. ժամը 16:05-ին կայացաց նիստի արդյունքները և կից ներկայացված փաստաթղթերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 02.02.2017թ. ներկայացված բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ***ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու <u>հաջորդ օրվանից</u>, որով որոշված է ժամկետի սկիզբը:***

Նույն օրենքի 84-րդ հոդվածի համաձայն՝

1.Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ***ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:***

2. Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված:

Միևնույն ժամանակ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Համաձայն Կարգի 51-րդ հոդվածի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ ***առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Պատվիրատուն՝ ***26.01.2017թ.-ին*** էլեկտրոնային փոստի միջոցով թիվ 3 արձանագրությունն ուղարկելով և առաջարկելով առկա անհամապատասխանությունները շտկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում, միաժամանակ հանձնաժողովի հաջորդ նիստի օր և ժամ է սահմանել՝ ***27.01.2017թ.*** ժամը 13:30-ը:

Ավելին, համաձայն 27.01.2017թ. ***ժամը 13:30-ի*** թիվ 3.1 արձանագրությամբ ընդունված որոշման՝ Ընկերության հայտը մերժվել է՝ **իրեն տրամադրված 1 աշխատանքային օրվա ընթացքում** (որը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ և 84-րդ հոդվածների համաձայն՝ դեռևս չեր կարող համարվել լրացած) «Տեխնիկական միջոցներ» չափանիշը հիմնավորող շտկված փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Հետևաբար, Պատվիրատուի կողմից չի պահպանվել՝ ներկայացված փաստաթղթերը շտկելու նպատակով, Ընկերությանը մեկ աշխատանքային օր տրամադրելու վերաբերյալ օրենսդրական պահանջը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ Ընթացակարգի շրջանակներում խախտվել է Ընկերության՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող շտկված փաստաթղթեր ներկայացնելու իրավունքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 02.02.2017թ. ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՀԱԷԿ-ՇՀԾՁԲ-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2017թ. թիվ 3.1 արձանագրությամբ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն կարող է բողոքարկվել դատական կարգով:

ԳԲԽ-13/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողով՝

նախագահ **Գ. Գրիգորյան**

անդամ **Հ. Մնացականյան**